CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

ԼՂ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

(իրավական իրազեկում)

Հրապարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացվող՝ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում:

ԵՐԵՎԱՆ 2024

CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ԿԱՄ ՄԱՄՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ՝ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ 3

Ա. Իրավական հիմքը 3

Ա1. Կարգավորման առարկան.....3

Բ. Նպատակը.....4

Գ. Չևաչափը 4

Դ. Ժամկետը 4

Ե. Չափը 4

Զ. Շահառուները 6

Է. Կրթաթոշակի տրամադրման կարգը 7

2. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ԼՐԻՎ ԿԱՄ ՄԱՄՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՐԱՄԱՆԱԳՐՎԱԾ ԵՎ ԸՍՏ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԿԱՄ ԾՐԱԳՐԵՐԻ՝ ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ, ՄԻՋԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ, ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿԱՄ ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՏԱՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ 10

Ա. Իրավական հիմքը 10

Ա1. Կարգավորման առարկան 11

Բ. Նպատակը 12

Գ. Չեաչափը 13

Դ. Չափը 13

Ե. Ժամկետը 14

Զ. Շահառուները 14

Է. Փոխհատուցման տրամադրման կարգը 17

ԼՂ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ (ԻՐԱՎԱԿԱՆ ԻՐԱՋԵԿՈՒՄ)

1. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ՝ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Ա. Իրավական հիմքը

ՀՀ Կառավարության՝ 2023 թվականի հոկտեմբերի 12-ի *«2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման կարգը և տրամադրվելիք կրթաթոշակի առավելագույն չափերը հաստատելու մասին»* **N 1762-Լ** որոշումը:

Ա1. Կարգավորման առարկան

Սույն որոշմամբ կարգավորվում են **2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո** Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, Լեռնային Ղարաբաղում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտա-

կան, բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացրած ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման **կարգն ու տրամադրվելիք կրթաթոշակի առավելագույն չափերն՝ ըստ կրթական ծրագրերի**:

Բ. Նպատակը

Սույն ծրագիրն ուղղված է Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբերի 19-ից **հետո** տեղահանված՝ **Լեռնային Ղարաբաղի համապատասխան ուսումնական հաստատությունների** ուսանող հանդիսացած **և** ՀՀ համապատասխան ուսումնական հաստատություններ տեղափոխված անձանց ֆինանսապես աջակցմանը:

Գ. Չնաչափը

Սույն ծրագիրը ենթադրում է ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակների տրամադրում:

Դ. Ժամկետը

Կրթաթոշակները տրամադրվում են **2023-2024, 2024-2025, 2025-2026, 2026-2027 և 2027-2028 ուսումնական տարիների համար, մինչև տվյալ կրթական մակարդակում ուսումնառության ավարտը:**

Ե. Չափը

Կրթաթոշակի տարեկան չափը որոշվում է՝ հիմք ընդունելով ուսումնական հաստատության համապատասխան

մասնագիտության (կրթական ծրագրերի) համար սահմանված վարձի չափը, սակայն 2023-2024 ուսումնական տարվա համար չի կարող գերազանցել համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրերի) համար ՀՀ Կառավարության՝ N 1762-Լ որոշման N 2 և N 3 հավելվածներով սահմանված առավելագույն չափը (տե՛ս այստեղ), իսկ մագիստրոսի կրթական ծրագրերում՝ 560 հազ. դրամը:

2024-2025, 2025-2026, 2026-2027 և 2027-2028 ուսումնական տարիների համար սովորողին կրթաթոշակ տրամադրվում է ըստ կիսամյակների՝ **հիմք ընդունելով ուսումնական հաստատությունների համապատասխան կրթական ծրագրի համար սահմանված ուսման վարձի չափը, ընդ որում՝**

- **բակալավրի, անընդհատ և ինտեգրացված, մագիստրոսի կրթական ծրագրերի համար ոչ ավելի, քան ՀՀ կառավարության կողմից սահմանված՝ ըստ կրթական աստիճանների և հավատարմագրման արդյունքների ուսման վարձի առավելագույն չափը**, իսկ
- նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սույն կարգի շահառու հանդիսացող սովորողների կրթաթոշակը տրամադրվում է տվյալ ուսումնական հաստատության կողմից տվյալ տարվա համապատասխան մասնագիտությամբ սահմանված ուսման վարձավճարի չափով:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Սովորողներին **2025-2026, 2026-2027 և 2027-2028 ուսումնական տարիների** համար կրթաթոշակը տրվում է նախորդ ուսումնական տարվա արդյունքում **միջին**

որակական գնահատականի 75.00 տոկոսը հաղթահարելու դեպքում, իսկ նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողի պարագայում՝ նախորդ ուսումնական տարվա արդյունքում 50 տոկոսից ոչ պակաս «գերազանց» և «լավ» գնահատականներ ունենալու դեպքում:

Զ. Շահառուները

Սույն սոցիալական ծրագրի շահառուներ են **2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո** Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված **(1)**, 2023 թվականի սեպտեմբերի դրությամբ **Լեռնային Ղարաբաղի ուսումնական հաստատությունների սովորող հանդիսացող (2)**, և համապատասխան մասնագիտություններով (կրթական ծրագրերով) ՀՀ պետական ուսումնական հաստատություններում (նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող **պետական** ուսումնական հաստատություններում կամ կազմակերպություններում/մասնաճյուղերում) սահմանված կարգով հրամանագրված **տեղափոխված** ուսանողները **(3)**:

Կենտրոնի կողմից իրականացված հարցումների արդյունքում պարզ է դարձել՝ սույն ծրագրի շահառու կարող են լինել միայն պետական ուսումնական հաստատություն տեղափոխված անձինք, ոչ պետական ուսումնական հաստատություն տեղափոխվելու դեպքերի վրա սույն ծրագիրը չի տարածվում:

Բացի այդ, կարևոր է իմանալ, որ շահառու սովորողների իրավական կարգավիճակի փոփոխությունը, այն է՝ ՀՀ քաղաքացիություն ստանալը, որևէ կերպ չի կարող դիտարկվել իբրև ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի դադարեցման կամ մերժման հիմք:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ ոչ բոլոր պետական ուսումնական հաստատությունների մասնաճյուղերում է հնարավոր ընդունվել սույն ծրագրի շրջանակներում. ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հրապարակել է պետական ուսումնական հաստատությունների և/կամ դրանց այն մասնաճյուղերի ցանկը (տե՛ս այստեղ), որոնցում կարող են իրենց ուսումը շարունակել 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողները՝ սույն ծրագրի շրջականներում ստանալով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում:

Է. Կրթաթոշակի տրամադրման կարգը

➢ Ուսանողները սույն ծրագրի շրջանակներում փոխհատուցում ստանալու համար դիմում են **պետական ուսումնական** հաստատությանը՝ ներկայացնելով հնարավոր ամբողջական տեղեկատվությունը և փաստաթղթերը:

Պետական ուսումնական հաստատությունը ներգրավում է սովորողին (ուսանողին) համապատասխան կրթական ծրագրի դասապրոցեսում,

եթե՝

- տվյալ կրթական ծրագրում լրացուցիչ սովորողների ներգրավման համար առկա են ֆիզիկական անհրաժեշտ պայմաններ,
- եթե կարգով սահմանված կրթաթոշակի առավելագույն չափը բավարարում է տվյալ ուսումնական հաստատությունում տվյալ կրթական ծրագրով ուսումնական պրոցեսում ներգրավվելու համար:

Հակառակ պարագայում՝ ԼՂ բռնի տեղահանված սովորողը (ուսանողը) կարող է դիմել նույն ծրագիրն իրականացնող այլ պետական ուսումնական հաստատություն կամ ուսհաստատության մասնաճյուղ՝ ՀՀ այլ քաղաքներում:

- Ուսումնական պրոցեսում սովորողի (ուսանողի) ներգրավմանը զուգընթաց՝ պետական ուսումնական հաստատությունը կազմակերպում է վերջինիս տեղափոխության փաստաթղթավորումը՝ ըստ անհրաժեշտության համագործակցելով այլ մարմինների հետ:

- Պետական ուսումնական հաստատության և սովորողի (ուսանողի) միջև կնքվում է պայմանագիր՝ հատկացված կրթաթոշակի միջոցներով ուսման վարձի փոխհատուցման մասին:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Շահառու հանդիսացող և ուսումնառությունը դադարեցրած (պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում) ուսանողը սահմանված կարգով և ժամկետներում վերականգնվելիս պահպանում է նշված ծրագրով ունեցած կրթաթոշակ ստանալու իրավունքը:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ ՆԱԵՎ

Սահմանված կրթաթոշակը չի տրվում, եթե՝

1) սովորողը տեղափոխվել է այլ ուսումնական հաստատություն, կամ

2) սահմանված կարգով փոխել է կրթական ծրագիրը, կամ

3) հեռացվել (ազատվել է) ուսումնական հաստատությունից, կամ

4) սովորողն ուսման վարձի ամբողջական փոխհատուցում է ստանում այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից:

2. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՐԱՄԱՆԱԳՐՎԱԾ ԵՎ ԸՍՏ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԿԱՄ ԾՐԱԳՐԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ, ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ, ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿԱՄ ԱՆԸՆԴՀԱՏ և ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ

Ա. Իրավական հիմքը

ՀՀ Կառավարության՝ 2023 թվականի դեկտեմբերի 21-ի *«Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում մինչև 2023 թվականի սեպտեմբերի 19-ն ընդգրկված Լեռնային Ղարաբաղի սովորողների ուսման վարձի փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու մասին»* **N 2291-Լ** որոշումը:

Ա1. Կարգավորման առարկան

Սույն որոշմամբ կարգավորվում են 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված ընտանիքների՝ **Հայաստանի Հանրապետության** նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում **2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ սահմանված կարգով հրամանագրված** և ըստ համապատասխան կրթական աստիճանների կամ ծրագրերի (արհեստագործական, միջին, բակալավր, անընդհատ և ինտեգրացված, մագիստրատուրա, ասպիրանտուրա, կլինիկական օրդինատուրա) **վճարովի** համակարգում ընդգրկված սովորողների, ինչպես նաև **2024-2025** ուսումնական տարում նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող **պետական** ուսումնական հաստատություններում, **պետական** բարձրագույն ուսումնական հաստատություններում **առաջին կուրս ընդունված**՝ սովորողների վրա (այսուհետ՝ սովորող) ուսման վարձի փոխհատուցման տրամադրման գործընթացը, պայմանները և չափերը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ի պատասխան ՀՀ ԿԳՄՍ նախարարություն հասցեագրված Կենտրոնի՝ 11.10.2024թ. հարցման՝ ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից ստացված թիվ 9.0/9.6/32174-2024 գրությամբ (այսուհետ նաև՝ Գրություն) նշվել է, որ

մինչև 2023/2024 ուսումնական տարին ներառյալ. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվածները հանդիսանում են ՀՀ կառավարության՝ 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2291-Լ որոշման շահառուներ:

ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն գրությամբ նշել է, որ 2024/2025 ուսումնական տարում ոչ պետական բուհեր ընդունված դիմորդները քննարկվող որոշման շահառուներ չեն:

Բ. Նպատակը

Սույն ծրագիրն ուղղված է 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության համապատասխան ուսումնական հաստատություններում **սովորող,**

ինչպես նաև 2024-2025 ուսումնական տարում նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող **պետական** ուսումնական հաստատություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշմամբ սահմանված կարգով **պետական** բարձրագույն ուսումնական հաստատություններում **առաջին կուրս ընդունված**՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո **տեղահանված** ընտանիքների **սովորողների (ուսանողների)** ֆինանսապես աջակցմանը:

Գ. Ձևաչափը

Սույն ծրագիրը ենթադրում է ուսման վարձի փոխհատուցման նպատակով կրթաթոշակների տրամադրում:

Դ. Չափը

1) 2023-2024 ուսումնական տարվա, ինչպես նաև **2024-2025** ուսումնական տարում արհեստագործական, միջին մասնագիտական, բակալավրի կամ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով սահմանված կարգով առաջին կուրս ընդունվածներին 1-ին կիսամյակի համար տվյալ կիսամյակի ուսման վարձի **100 տոկոսի չափով**, անկախ նախորդ ուսումնական տարվա արդյունքում ձևավորված միջին որակական գնահատականից (այսուհետ՝ ՄՈԳ) կամ առաջադիմությունից, առաջին կուրսում սովորողների պարագայում՝ ընդունելության արդյունքներից.

2) 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի և **2024-2025** ուսումնական տարվա համար՝ տվյալ կիսամյակի ուսման վարձի **100 տոկոսի չափով**՝ նախորդ կիսամյակի արդյունքում ՄՈԳ-ի 65.00 տոկոսը հաղթահարելու դեպքում, իսկ նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողի պարագայում՝ նախորդ կիսամյակի արդյունքում 50 տոկոսից ոչ պակասը «գերազանց» և «լավ» գնահատականներ ունենալու դեպքում.

3) **2025-2026** ուսումնական տարվանից սկսած և հետագա ուսումնառության ընթացքում, մինչև տվյալ կրթական մակարդակում ուսումնառության ավարտը տվյալ կիսամյակի ուսման վարձի **100 տոկոսի չափով**՝ նախորդ կիսամյակի արդյունքում ՄՈԳ-ի 75.00 տոկոսը հաղթահարելու դեպքում, իսկ նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողի պարագայում՝ նախորդ կիսամյակի արդյունքում 50 տոկոսից ոչ պակասը «գերազանց» և «լավ» գնահատականներ ունենալու դեպքում:

Ե. Ժամկետը

Փոխհատուցումը տրվում է 2023-2024, 2024-2025, 2025-2026, 2026-2027 և 2027-2028 ուսումնական տարիների համար:

Զ. Շահառուները

Սույն սոցիալական ծրագրի շահառուներ են՝

1-ին պայմանական խումբ.

➢ **2023 թվականի սեպտեմբերի 19-ից** Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված **ընտանիքների՝**

➢ Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում **2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ** սահմանված կարգով հրամանագրված և ըստ համապատասխան կրթական աստիճանների կամ ծրագրերի (արհեստագործական, միջին, բակալավր, անընդհատ և ինտեգրացված, մագիստրատուրա, ասպիրանտուրա, կլինիկական օրդինատուրա) վճարովի համակարգում ընդգրկված **սովորողները (ուսանողները) (բուհերի ցանկը տե՛ս** այստեղ**),**

2-րդ պայմանական խումբ.

Արհեստագործական, միջին մասնագիտական, **բակալավրի** կամ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով **2024-2025** ուսումնական տարում սահմանված կարգով առկա ուսուցմամբ **պետական ուսումնական հաստատություններ** առաջին կուրս ընդունված սովորողները:

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն հասցեագրված Կենտրոնի՝ 11.10.2024թ. հարցման՝ ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից ստացված թիվ 9.0/9.6/32174-2024 գրությամբ (այսուհետ նաև՝ Գրություն) պարզաբանվել է, որ

Մինչև 2023/2024 ուսումնական տարին ներառյալ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվածները հանդիսանում են ՀՀ կառավարության՝ 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2291-Լ որոշման շահառուներ, հետևապես՝ այդ խումբ շահառուներն անգամ ոչ պետական բուհեր ընդունված լինելու պարագայում, կօգտվեն աջակցությունից. մինչ տվյալ կրթական մակարդակի ավարատը:

Իսկ արդեն արդեն 2024/2025 ուսումնական տարում ոչ պետական բուհեր ընդունված դիմորդները քննարկվող որոշման շահառուներ չեն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ այս ծրագրի շահառու սովորողների իրավական կարգավիճակի փոփոխությունը, այն է՝ ՀՀ քաղաքացիություն ստանալը, որևէ կերպ չի կարող դիտարկվել իբրև ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի դադարեցման կամ մերժման հիմք:

Է. Փոխհատուցման տրամադրման կարգը

- Սովորողները սույն ծրագրի շրջանակներում փոխհատուցում ստանալու համար դիմում են ուսումնական հաստատությանը:
- Ուսումնական հաստատությունը կազմում և նախարարությանն է տրամադրում սովորողների անվանացանկ:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Տվյալ ծրագրին շահառու հանդիսացող և ուսումնառությունը դադարեցրած (պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում) սովորողը սահմանված կարգով և ժամկետներում վերականգնվելիս պահպանում է սույն կարգով փոխհատուցում ստանալու իրավունքը:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Սահմանված փոխհատուցումը չի տրվում, եթե՝

1) սովորողը տեղափոխվել է այլ ուսումնական հաստատություն, կամ

2) սահմանված կարգով փոխել է կրթական ծրագիրը, կամ

3) հեռացվել (ազատվել) է ուսումնական հաստատությունից, կամ

4) սովորողն ուսման վարձի ամբողջական փոխհատուցում է ստանում այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից: